

14226

ԼՐԱՆԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 1 №-Ը

Ս. ՄՈԱՅԼ

9
10
71.

Handwritten notes in Armenian script, partially obscured by a decorative border.

ԱՆԿԱՅԱՆ ԲԱԳՉԱՆՔՆԵՐ



ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԸՆԾԱՆԵՐ

ՄԵԾԵՐԻ ԵՒ ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ



1913 թ. ԵՐԵՒԱՆ

891-99
5-93

ՀԿԱ

891 99
Ը-93

ԻՄ ԱՂԲԱՏ ԳՐԱԴԱՐԱՆԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 1 Ռ-Ը

Ս. ՄԻԱՅԷԼ

ԱՆԿԱՅԱՆ
ԲԱՂՉԱՆՔՆԵՐ

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԸՆԾԱՆԵՐ

ՄԵԾԵՐԻ ԵՒ ՓՈՐՐԵՐԻ ՀԱՄԱՐ

2003

ԵՐԵՎԱՆ 1913 թ.

Տպարան «ԼՈՅՍ» Արշ. Յակոբբեան և որդիք

73881 - Ա. Զ.

Այսօր քո կեանքի գարունն է
լսկ իմ աշունը:

ՎԵՐԻՆՑ

— Ի՞նչ էս այդպէս տխրել, նոթերդ
կիտել ի՞նչ՝ նայիր, բոլոր բարձր շէնքերը
զուգուել են մի չտեսնուած պճրանքով, բոլոր
պատուհաններից երևում են շքեղ դահլիճ-
ներում մաքուր ու կոկ հագնուած ընտանի-
քի զաւակներ ուրախ ու փստթամ. այսօր
բոլորն էլ ուրախ են, ամենքն էլ պատրաս-
տութիւն են տեսնում, չէ՞ որ վաղը չէ միւս
օրը նոր տարի է, անա քաղաքի բոլոր
փողոցները զարդարել են տօնածառի ճիւ-
ղերով տես մարդիկ ինչպէս շտապում են
շուկայ գնալ բոլորն էլ տօնածառի պատ-
րաստութիւն են տեսնում՝ չէ՞ որ նոր
տարուց վեց օր յետոյ զատիկ է նորից
պատրաստութիւն, իրարանցում երգ, պար,
խնճոյք. միթէ՞ դու այդ բոլորի մասին չես
մտածում. այնպէս էս տխրել, այնպէս էս

նոթերդ կիտել կարծես այդ բոլոր ծախսերը
քեզնից են ուզում. դու տխուր էս շատ էս
տխուր, բայց տես էս որքան եմ ուրախ:

Դու տեսել էս մեր տօնածառը, մի
տեսնես թէ մայրս ինչպէս է զարդարել
կարծես մի նորահարս լինի մեր դահլիճում
կանգնած՝ շատ գեղեցիկ է. փոքրիկ քոյրերս
միշտ անհամբեր հարցնում են նոր տարւայ
մասին չէ՞ որ նոր տարու տօներին միշտ էլ
լաւ լաւ հանդէսներ են լինում. ան որքան
լաւ են տօն օրերը, էս կուզէի միշտ այդ-
պէս տօներ լինէին, միշտ պար միշտ խնճոյք:

Միթէ՞ դու չէս ուզում շարունակ տօն
լինի, ի՞նչու էս այդպէս տխրել նոթերդ կիտել:
— Չէ, չէ, էս չեմ ուզում, էս ոչինչ
չեմ ուզում.

— Ինչո՞ւ չէս ուզում. այ նայիր այն
բարձր պատուհանի առաջ դրուած տօնածառը
ինչպէս էս զարդարել, մանուկները մաքուր
հագնուած պըտտուում են նրա շուրջ նայիր
նրանց հայրը եկաւ և որքան ուրախ է նա.
անա այն մէկին համբուրեց. տես որքան
լաւ է տօն օրը բոլորն էլ ուրախ, բոլորն
էլ մաքուր հագնուած. տես նրանց զախիւնը
իր տիկնոջ դէն շարտած շորերը հագել է և
ինչպէս ուրախացնում է գրկում պահած



125-85

փոքրիկ երեխային. եթէ երեխան ամբողջ
օրը վայր չգայ նրա գրկից՝ նա դարձեալ չի
բարկանայ մատներով նրա փոքրիկ ոտների
փափրիկ մտերը էլ չի կապտացնի, որովհետև
տիկիներ նրան տեղ է իր հնամաշ շորերը
նա շատ ուրախ է, և ուզում է միշտ տօն,
միշտ նոր տարի լինի որովհետև ամեն տօն
օրի նա կ'ստանա իր տիկնոջից բնծայ մի
ձեռք հին շոր. էս օր մայրդ մի կապոց
մեր մաշած գուլպաներից տարաւ որ կար-
կատի դուք հագնեք. միթէ գեղեցիկ չին լի-
նում տօն օրերը, բոլորն էլ ուրախ են լի-
նում տե՛ս, ես էլ ուրախ եմ իսկ դու տխուր
ես շատ ես տխուր երեւի բարկացել ես:

— Հն բարկացել եմ, ես կուզէի էս
բոլոր լինել շանթահարող կայծակ, ու հըր-
դեհէի այն բոլոր մեծ շէնքերը մոխիր դար-
ձնէի ուր պատրաստուում են նոր տարեայ
համար խնճոյքներ, պարեր՝ որտեղ մեզ
նմանները կեանքից ու բազդից հալածած,
առանց հագուստի, առանց կոպէկի, կարօտ
մի կտոր չոր հացի, անօթի փորով լիզում
են շարունակ ձեզ նմանների ապականւած
լաթերը, ձեր շէմքի մոխիրներն են դառնում
մի պատառ չոր հաց, մի կտոր հին շոր, մի-
քանի սև գրոշ ճարելու համար. և այդ բո-

լորը տանում էք դեռ դուք առանց կսկիծի,
առանց արցունքի, և դեռ շատերին դուք
էք շարտում առանց կոպէկի, առանց
խղճալու, առանց ձեր հոգին մի վիշտ զգա-
լու, ձեզ համար վիշտը գոյութիւն չունի, է
դուք «երջանիկ» մարդկանց գաւակներ:

Ահա նայիր փողոցից անցնող այն կի-
սամերկ տղային, նա էլ ինձ նման որր է
ու աղքատ. նրա ոտները կապուել են ցրտից,
և նա իր ուսին դրած տօնածառի ծանր
ճիւղքի տակ հեռւմ է ու քրտինքը կա-
թիլ-կաթիլ թափւում յոգնած ճակա-
տից, և թրջում նրա կեղտոտ ու կարմրած
այտերը: նա չի սրտնջում որովհետև ստա-
ցել է հինգ կոպէկ փող պէտքէ հասցնի
պատւիրած տեղը, նրա ուսը տատանւում
է ահագին ծանրութիւնից, բայց ինչ փոյթ
նա ստացել է հինգ կոպէկ փող, և պէտքէ
շուտ տեղ հասցնի:


Ահա այդպէս է մեր բոլորիս կեանքը,
ձեր կեղտոտ լաթի կտորները կլիպենք, ձեր
շէմքի մոխիրները մէջ թաւալ կտանք, և
դուք առանց կսկիծի, խնճոյքով ու պարով
կատարեցէք ձեր նոր տարին. իսկ մենք
էլ առանց կսկիծի ու հառաչանքի, ձեր
դաան փշրանքներով, ու մեր վաստակած սև

կոպէկներով կը կատարենք մեր սև ճակատագրի արցունքոտ աօնը: Հա մեր ճակատագրի, մեր սև ճակատագրի, որովհետև կեանքը մեզ դրանից աւել ոչինչ չի տւել. նայիր տես ես դողում եմ ցրտից, քոյրերս փոքրիկ եզրայրներս, և մեզ նման այն բոլոր աղքատներն ու որբերը, որը փողոցներում անտէր ու անօթի թափառում է անց ու դարձ անողններից կոպէկներ մուրալով, և որը սև ու մութ յարկի տակ նստած աչքները յառած դէպի դուռը սպասում են թէ ով կուզարկէ մի ձեռք հնամաշ զգեստ, մի զոյգ հին կօշիկներ. և իհարկէ դուք դրան ասում էք ողորմութիւն. այդպիսի ողորմութիւններ անելով դուք պարծենումէք. բայց չէ՞ որ իմ մայրս ամբողջ տարին ձեր լացքն է անում, ձեր կեղտոտած ու ապականւած լաթերն է մաքրում, ու ստանում մի չնչին վարձ՝ և այդպէս կան հազարները, իսկ դուք պարծենում էք դրանով և ասում էք օգնում ենք:

Հա, հրը դուք այդպէս օգնում էք, երբ դուք վերջապէս այդքան խղճահարւել գիտէք, գնացէք ուրեմն հանգիտ խղճով ուրախ խնճոյքով կատարեցէք ձեր նոր տարին ու Զատիկը. իսկ մենք միշտ այդ

պէս թաւալ կը տանք ձեր շէմքի մոխիր-խիրների մէջ, և արտասուքն աչքներին կը կատարենք մեր ճակատագրի անխնճոյք ու արցունքոտ սև աօնը. ի՞նչ պիտի անենք երբ կեանքը մեզ դրանից, աւել ոչինչ չէ տւել.

Եւ պիտի տանենք:



նւիրում եմ այն բոլոր գեղեցիկ կա-
նանց, ու օրհորդներին, որոնք կեան-
քիս մէջ գոնէ մի անգամ նստեցի
են ինձ ու ներշնչել իմ մէջ ձգտումը՝
այն ինչ բարձր է ու վեհ:

Գուրբը ցուրտ էր շատ ցուրտ, լամպի
լոյսը մարել էր արդէն՝ սենեակումս խա-
ւար էր ու անսպասելի լուռ թիւն. պատու-
հանի առաջ նստած, դեռ ես նայում էի
գուրբը գէպի երկինքը, ուր կարծես մռայլ
էր ամեն ինչ, աստղերը հազիւ էին նշմար-
ւում. քամին կտուրներէ վրայ իջած ձիւ-
նը փոշիացնելով բերում լցնում էր պատու-
հանիս փեղկերն ու երկաթեայ վանդակա-
նման բացւածքները պարուրում ձերմակ
ու մաքուր բաթիւնըրով:

Իրսից ձիւնի անթափանց փոշին, ներ-
սից էլ ծխախոտի արբեցուցիչ ծուխը ասես
ուզում էին փշրել ապակիները և ձուլել
իրար գիշերային, մենութեան մէջ, և այդ
չնչին գործողութիւնը թւում էր ինձ մի
խրճորդաւոր ու անբացատրելի գաղտնիք:

Այո, գիշերային մենութեան մէջ ամեն

տեսակ մաքրի ու գաղտնիքների իրագործ-
ման տէնչանքն են զգում...

Անկողինս սառն էր շատ սառը, օ ան-
տանելի ու ձանձրալի էր միայնութեան այդ
տխուր երեկոն՝ սակայն ես մտածում էի այլ
բանի մասին, թէ վաղը միւս օրը ինչեր
կը լինէր:

Ի՞նչ կը լինի... Ամեն, ամեն, բան կը
լինի բայց ի՞նչ ինչ, ինչ համար չկայ ոչ
նեղկայ ոչ ապագայ, ես ուզում եմ շատ բան
բայց չունեմ ոչինչ, ես ուզում եմ աշխար-
հում բոլոր մարդկանցից երջանիկ լինել սա-
կայն ամենից թշուառ, ամենից դժբաղդ եմ:

Ես ուզում եմ այն բոլոր գեղեցիկ կա-
նանց աչքին երևալ որպէս մի հսկայ, ես
ուզում եմ բոլորը նային ինձ, շատերը
նախանձեն թէ կուզ ծաղրեն, արհամարէն,
բայց չէ որ ես հսկայ եմ քաջ և հպարտ հըս-
կայ չէ որ բոլորը կը խոնարհեն իմ առաջ
բոլոր կանայք կը հրճեն ինձնով որով-
հետեւ ես ջանել, եմ ու հպարտ հսկայ. ես բո-
լոր մարդկանց կը նայեմ հպարտ հայեացքով
որովհետեւ ես հպարտ եմ, հսկայ հպարտ,
իմ հսկայական քայլերիս զոփիւնից բոլորը
ձանաչում են ինձ և ձանապարհ են տալիս
անցնելու. փողոցում որքան գեղեցիկ աչքեր

բարի ու հնազանդ հայեացքով կ'նայեն ինձ
ու կըժպտան, որովհետև ես հսկայ եմ՝ մեծ
հսկայ, և այն բոլոր գեր ու յազթնադամ
կանայք որ ողջ կեանքում կըքով են սնոււմ
միայն, նրանք ինձ կօրհնեն որովհետև
ես հսկայ եմ միայն նրանց երկրպագեմ,
ու ասաւածացնեմ. և ես շքեղ սիւնասարդ
դահլիճում մետաքս բարձերի վրայ բազ-
մած, հզօր իշխանի նման, իրենց գեր
ու մերկանդամ մարմնով հազարաւոր կա-
նայք մի խելագարեցնող երգի եղանակով
պարէին իմ շուրջս, ու ես կըքի հազարաւոր
լեզուներով գալարէի նրանց պարանոցին,
թաւարէի նրանց ոտների տակ, ու լիզէի
շարունակ նրանց թթւաւ մարմինը, ես օձի
նման կը գալարէի նրանց կիրք ու ցան-
կութիւն ներշնչող ստինքների ծալքերի մէջ:

Ես հսկայ եմ միայն հսկայ ու գեղեցիկ
կանանց երկրպագելու և ասաւածացնելու
համար...

Ես երազում էի գալիք օրերի կախար-
դանքների մասին, կախարդանքներ, որ
վայրկեանի մէջ խելագարութեան բնագղն
ես ստեղծում, սրբացնելու և անմահացնելու
համար. ես երազում էի այն շքեղ դահլիճը
լի մաքուր հագնւած հասարակութեամբ, որի

մէջ անց ու դարձ էի անու՛մ՝ ու տես-
նում էի դահլիճի անկիւններից հարիւրաւոր
կըքոտ ու բարի աչքեր, հպարտ քայլերիս
ու մարմնիս շարժումները կը դիտէին սիւ-
նազարդ դահլիճի հայելիների մէջ, ուր ար-
տացուում են իրենց անգաղտնապահ հմայք-
ներով բազմաթիւ դեմքեր. դեմքեր, որոնք
համակրելի են լինում անհատի հոգուն, և
ոչ բոլորին:—

Ես երազում էի, երազում այդ բոլորի
մասին, բայց շուրջս չկար ոչինչ սենեակում
ամայութիւն էր ու խորին լուսթիւն փոք-
րիկ գրասեղանիս վրայ անկանոն կերպով
թափթփւած մի քանի կտոր գրքերը որ հա-
զիւ էին ջոկուում սենեակի մթութիւնից,
պատուհանից թափանցող լուսնի նւաղ լոյ-
սի տակ, և մի կտորատուած մահճակալ որի
վրայ պցած էր հնամաշ ու անխնամ ւնկո-
ղինս, իսկ ես որ ձեանում էի մի հպարտ
հսկայ բոլոր մարդկանց նախանձի ախոր-
ժակը դրգոելու համար, ես էլ մի ոչնչու-
թիւն էի ձուլւած մէտիկ սենեակիս կիսա-
խաւարի մէջ:

Դուրսը ցուրտ էր շատ ցուրտ. քամին
առանց դադար առնելու, փոշիացած ձիւնը
դիզում էր պատուհանիս ասպակիները շուրջը

և լուսնի բնական ու ստեղծած և ճաճանչները
ձիւնի ճերմակ տարածութեան մէջ հազա-
րանոր գոյների, զձեր էին նկարում ասես:

Անկողինս սառն էր, շատ սառը՝ յու-
սահատօրէն ու դողդողալով, հազարաւոր
մտքեր պահած գանգիս մէջ, թոյլ ու ան-
զօր հիւանդի նման ծածկւում եմ բարակ
վերմակիս ծալքերի տակ.— Ա՛հ միայնու-
թիւն, միայնութիւն. գիշերային այս խոր-
հրդաւոր լուսնեան մէջ, հիմա ո՞վ գիտէ
ինչոր չեն լինում՝ ո՞ճիր, դատապարտութիւն,
օճային գալարումներ. սպասումներ, մի
խօսքով գիշերը խորախորհուրդ ու անբա-
ցատրելի գաղտնիքների մերկացումի պատ-
րանքն է. իսկ այդ ժամանակ իմ մէջ դարթ-
նել էր մի սոսկալի զայրութի, բոլոր ջահել
տղամարդկանց դէմ, ես ուզում էի իմ ու-
ժեղ բազուկներով առանց խղճալու ջարդել
ու ոչնչացնել բոլորին ու նրանց գիւղիների
վրայով քայլէի հպարտութեամբ առանց իմ
մարմնիս վրայ մի սառսուռ անգամ զգալու-
իմ մէջ գարթնել էր մի վայրենի ցանկու-
թիւն՝ լինել հեշտասէր, և բոլոր գանանց
աչքին երեւալ հպարտ ու հզօր և երջանկա-
նալ միայն նրանցով.

..և անցաւ հազիւ մի քանի վայրկեան, ես
մոռացիլ էի արդէն ամեն ինչ:

Արդէն զարուն էր... Մի շտեմնած ծա-
ռուղի էր այն, որի բարձր ու սազարթախիտ
թթենիների տակ նստարանների վրայ շար-
քերով նստած էին բազմաթիւ կանայք. նը-
րանք միայնակ էին, ու ասես ինչոր տխուր
թախիծ էր իջել նրանց անընդհատ բարա-
խող սրտին, բոլորի աչքերն էլ ասես թէ
ինչ որ անջատումից դառնացած հսկումի,
ու կարօտի արցունքեր էին թափում. աը-
խուր էին, բոլորը տխուր. ա՛հ միայնութիւն,
միայնութիւն, ամեն տեղ տարածիլ էր իր
տխրադալուկ թևերը:

Մարմարեա աւազաններից ցայտում
էին տանեակ շատրւաներ, կանաչ-կարմիր
ձիւճանագոյն հիւլիներով արեգակը մշու-
շում. կանանցից շատերը հանգարտ քայլում
էին ասես որոնող հայեացքով, իսկ ոմանք
նստած թթենիների զով սոււերների տակ,
նայում էին շրջողներին անփութօրէն. այ-
գին զարգարել էր հազարաւոր թարմ ու
գեղեցիկ ծագիկների գոյներով, ինչպէս որ
լինում էր ամեն տարի, ամեն գարուն, այդ-
պէս էր և անցեալ օրը. բոլոր մարդիկ շր-
ջում էին թեանցուկ արած իրենց սիրելի-

ների հետ, կանայք ուրախ էին, Оркестրը նւագում էր. ուրախ էին բոլորը, զղրողւմ էր այգին հազարաւոր մարդկանց քայլերի դոփինից: Իսկ այսօր ամայութիւն էր տիրում բոլոր կանայք որը էին մնացել. Оркестրն չկար լուռ էր ամեն ինչ. կանայք միայնակ ու տխրադէմ, նստոտել էին թթենիների զով սուէրների տակ: Իսկ ես որպէս պատերազմից յաղթական փառքով վերադարձող հզօր ասպետ, հպարտ քայլերով անցայ ծառուղին. ամեն կողմից փունջ փունջ ծաղիկներ ու յաղթական փառքի պսակներ էին թափւում ոտներիս տակ. ու միայնակ քայլում էի ծառուղին այն ամայի, ուր հարիւրաւոր ջահել կանանց կրքի ու կարօտի ձայնըն էր բողոքում միայնութեան դէմ, և բոլոր կանայք միայնակ էին. ինձ թւում էր թէ բոլոր մարդկանց ես տրրորելով անցել էի հպարտօրէն տիրելու այն բոլոր գեղեցիկ ու յաղթանդամ կանանց, որոնք իրենց կանացի ուժով հսկայ ու հզօր տղամարդկանց անյագուրդ ցանկութեան արիւնն են քսմում. արիւնը կրքի...

Այգին լցւել էր մահի սառսուտով, մարմարեայ աւազաններից ցայտող շտարւանների մելամուղձոտ քչքչոցը ասեւ ինչոր

ողերգի անորոշ բառեր էր կըմկըմում խեղդած ու յուսահատ և փոշիացած հիւլէնեւ լով արեգակը մշուշում արևելեան հարսի պունասը քողի նման, իսկ ես անցնում էի առանց յոգնելու հպարտ և ուժեղ քայլերով, կանայք ու նորահաս աղջիկները գեռ շարունակում էին օդային համբոյրբերով, ու յաղթական փառքի պսակներով ողջունել ինձ, և շնորհաւորել իմ յաղթանակը՝ որ ես տրորելով բոլոր մարդկանց գանգերը անցել էի քաջութեամբ, իմ բազուկները պողպատի ատրութիւն ունէին, և ոտներս ներկւել էին արիւնով. այն բոլոր տղամարդկանց արիւնով. ես գոհ ու երջանիկ քայլում էի, իսկ կանայք բոլորն էլ ուրախ էին որովհետև ես յաղթել էի, ես հզօր էի, ես էլ էի ուրախ. որոհետև աշխարհի փառքն ու մեծութիւնը հզօրներն են վայելում...

Բոլոր կանայք հետևում էին ինձ ու ողջունում իմ յաղթանակը, մի նորահաս աղջիկ հեռւից յաղթական փառքի պսակը ձեռքին մօտեցաւ ինձ ու ասաց.

— Թոյլ տուր ինձ պսակել քեզ յաղթական փառքի պսակով, որին արժանի ես միայն դու, և համբուրել քո քաջ և հըպարտ հակաար...

Ես չը մերժեցի. նա մօտեցաւ ու փաթաթեց. պարանոցովս, և համբուրում էր ագահաբար ոչ թէ ճակատս այլ շրթունքներս. բայց երբ նա բաժանւեց, ինձ մօտեցաւ սև ու թուխ այտերով, գեր և լայն կրծքով մի կրքոտ կին ու խնդրեց.

— Թոյլ առւր ինձ լիզել քո ստների թաթախած արիւնը՝ այն բոլոր տղամարդկանց արիւնն է...

Եւ նա քաղցած վագրի նման չոքեց իմ առաջ, ու լիզում էր ագահաբար ստներիս արիւնը. իսկ դրանից մի քանի վայրկեան յետոյ չգիտեմ ինչպէս նա ինձ պահած իր լայն կրծքի վրայ, ամուր սզմում էր, և կրծոտում այտերս ու շրթունքներս:

Ես սարսափահար զարթնեցի.

Սենևակիս կիսախաւարը վերացել էր. արեգակի ճառագայթները ներս էին թափւել սառած ապակիներից, հազիւ լուսաորիւով հանդէպի պատից կախած ֆրանսիական մի հսկայի լուսանկար. նա երջանիկ էր նա քաջ էր ու հզօր, իսկ ես դեռ ծուրօրէն անկողնիս մէջ այս ու այն կողմն էի շուռ գալիս.

Դուրսը ցուրտ էր շատ ցուրտ...



2013

14226

15ⁿ

496/9
15 -

Handwritten signature

9766 4 7 409.